# ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏ) ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ընտանիքի բարձրորակ, ժամանակին, համապարփակ պլանավորումը և վերարտադրողական առողջության ծառայությունները հիմնարար են անհատների, ընտանիքների և համայնքների առողջության համար: Այս ուղեցույցը նկարագրում է Լոս Անջելեսի Շրջանում հասանելի աղբյուրները բոլոր նրանց համար, ում անհրաժեշտ է հղիության ընդհատման հետ կապված բուժօգնություն, հակաբեղմնավորիչներ կամ հարակից ծառայություններ:

Այս ուղեցույցը պարբերաբար թարմացվելու է, որպեսզի արտացոլի Շրջանի վերարտադրողական առողջապահության ոլորտի փոփոխությունները: Ծառայություններն այբբենական կարգով նշված են յուրաքանչյուր բաժնում:




## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հղիության արհեստական ընդհատման՝ աբորտի հետ կապված բուժօգնությունը հասանելի և մատչելի է Լոս Անջելեսի Շրջանում: Կալիֆորնիայում բժշկական ապահովագրությունները, ներառյալ՝ Medi-Cal-ի ապահովագրությունը, փակում են աբորտի ծախսերը: Նկատի ունեցեք, որ Կալիֆորնիայում բնակվող ցածր եկամուտ ունեցող բոլոր անձինք հղիության ընթացքում կարող են օգտվել Medi-Cal-ից՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Հղիության արհեստական ընդհատումը կարող է լինել դեղորայքային (դեղահաբեր) կամ հիվանդանոցում կատարվող միջամտությամբ՝ կախված հիվանդի նախապատվությունից, առողջական վիճակից ու կենսապայմաններից և հղիության փուլից:

Որոշ դեպքերում հղիության ընդհատման հետ կապված բուժօգնություն կարող են ցույց տալ կանանց մասնավոր մանկաբարձ-գինեկոլոգները (OB-GYN) կամ բուժակները/մանկաբարձ բուժակները: Մեծ մասամբ հղիության արհեստական ընդհատման ծառայություններն իրականացնում են այդ մասնագիտացված բուժօգնության համար վերապատրաստված մանկաբարձ-գինեկոլոգները (OB-GYN):

**Լոս Անջելեսի Շրջանում հղիության ընդհատում իրականացնողներից են՝**

**Cedars Sinai | Family Planning Program**
**Սեդարս Սաինայ | Ընտանիքի պլանավորման ծրագիր**
https://www.cedars-sinai.org/programs/obstetrics-gynecology/specialties/family-planning.html
310-423-3946 (բաց է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից ցերեկվա 4:30-ը):
Տեղում ծառայություններ մատուցող կլինիկա է, որն առաջարկում է ընտանիքի պլանավորման բոլոր ծառայությունները, ինչպես նաև դեղամիջոցներով և վիրաբուժական եղանակներով հղիության ընդհատման հետ կապված բուժօգնություն:

**FPA Women's Health**
**Ընտանիքի պլանավորման միություն. կանանց առողջություն**
https://www.fpawomenshealth.com/abortion
Զանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք հետևյալ համարին՝ 877- 883-7264 (բաց է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից երեկոյան 5:00-ն):
Տեղում, առցանց և հեռաառողջապահական ծառայություններով կանանց առողջության

պահպանման կլինիկա է, որն իրականացնում է գինեկոլոգիական, հակաբեղմնավորման, հղիության ընդհատման ծառայություններ և սեռավարակների (STI) թեստավորում: https://www.fpawomenshealth.com/telehealth

**Her Care**
**«Հըր Քեյր» («Նրա խնամքը»)**
https://hercare.org/
213-516-8580 (առավոտյան 9:00-ից երեկոյան 6:00-ն)
Ընտանիքի պլանավորման, կոսմետիկ վիրաբուժության և հղիության արհեստական ընդհատման մասնավոր ծառայություններ 15-65 տարեկան կանանց համար Լոս Անջելեսի Շրջանի երեք վայրերում:

**LA County Department of Health Services (DHS)**
**Լոս Անջելեսի Շրջանի Առողջապահական Ծառայությունների Վարչություն**
https://dhs.lacounty.gov/womens-health/our-services/womens-health/abortion/care121/
(877)-CARE121 (877-227-3121)
(Երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 7:30-ից երեկոյան 6:30-ը՝ արևմտյան ափի ժամանակով)
Հղիության արհեստական ընդհատման մասնավոր և գաղտնիություն պահպանող անվճար և ցածր արժեքով ծառայություններ բոլորի համար՝ անկախ տարիքից: Ապահովվում է անհատին ուղղված լրացուցիչ աջակցություն, ներառյալ՝ խորհրդատվություն, բժշկական տեղեկատվություն և ուսուցում, ինչպես նաև աջակցում է փոխադրամիջոցի, առողջարար սնունդ ձեռք բերելու, երեխաների խնամքի կենտրոն գտնելու և նմանատիպ այլ կարիքների հարցում:

**Luna Flow**
**Լունա Ֆլոու**
https://www.lunaflowhealth.com
Կալիֆորնիայում մասնավոր հեռաբժշկության միջոցով հղիության ընդհատում դեղերի օգնությամբ՝ մինչև 10 շաբաթական հղիության դեպքում: Լոս Անջելեսի Շրջանում հասանելի են նաև անձամբ այցելությամբ ծառայություններ տեղի կլինիկայում:

**My Choice Medical Center**
**«Մայ Չոյիս» («Իմ Ընտրությունը») բժշկական կենտրոն**
https://www.mychoicemedicalcenter.com/
866-397-3070 (հասանելի է ամբողջ օրը՝ միայն նախօրոք ժամադրությամբ)
My Choice բժշկական կենտրոնը լիարժեք ծառայություններ մատուցող մասնավոր բժշկական կենտրոն է, որն առաջարկում է հղիության արհեստական ընդհատման ծառայություններ:

**Planned Parenthood Los Angeles (PPLA)**
**Ընտանիքի պլանավորում Լոս Անջելեսում**
https://www.plannedparenthood.org/planned-parenthood-los-angeles
800-576-5544 (բաց է երկուշաբթիից շաբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 5:00-ն):
Planned Parenthood Los Angeles-ն առաջարկում է վերարտադրողական առողջությանն առնչվող համապարփակ բուժօգնություն Լոս Անջելեսի Շրջանի համայնքներում:

**Planned Parenthood Pasadena and San Gabriel Valley (PPPSGV)**
**Ընտանիքի պլանավորում Փասադենայում և Սան Գաբրիելում**
https://www.plannedparenthood.org/planned-parenthood-pasadena-san-gabriel-valley
626-798-7938
Planned Parenthood Pasadena & San Gabriel Valley-ն առաջարկում է վերարտադրողական առողջությանն առնչվող համապարփակ բուժօգնության ծառայություններ:
Հնարավոր են բուժաշխատողների հետ հանդիպումներ առանց նախօրոք ժամադրության, նույն օրը կամ տեսակապով:

**UCLA | OBGYN Division of Family Planning**
**UCLA | Ընտանիքի պլանավորման՝ մանկաբարձության և գինեկոլոգիայի բաժին**
https://www.uclahealth.org/medical-services/obgyn/family-planning
Զանգահարեք համակարգողին՝ 310-825-5961: Աշխատանքային ժամերն են՝ երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը, ուրբաթ՝ առավոտյան 8-ից ցերեկվա 4:30-ը: Ընդմիջման համար փակ են ցերեկվա ժամը 12-ից 1-ը:
Այս կլինիկան ունի վերարտադրողական առողջության համապարփակ ծառայություններ:

## ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԵՎ ԴԵՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Կալիֆորնիայի նահանգում աբորտը՝ հղիության արհեստական ընդհատումը, օրինական է և անվտանգ: Կալիֆորնիայում աբորտի դեպքում տրամադրվող բուժօգնությունը հասանելի է ցանկացած տարիքի բոլոր հղիներին՝ **անկախ ներգաղթի կարգավիճակից և բնակության վայրից:**

Համազգային հետևյալ կայքերն օգնում են այն մարդկանց, որոնք ցանկանում են ավելի շատ տեղեկատվություն ստանալ այն մասին, թե որտեղ և ինչպես կարելի է կատարել հղիության արհեստական ընդհատում:

**Abortion Finder**
**Աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման որոնիչ կայք**
https://www.abortionfinder.org/
Կայք, որը ներառում է առողջապահական ծառայություններ տրամադրող ավելի քան 700 կենտրոններ և ստուգված աբորտի ծառայություններ իրականացնողների համապարփակ ցանկ:

**ACCESS Reproductive Justice**
**«Վերարտադրողության արդարության ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ» ACCESS-ի շրջանակներում**
https://accessrj.org/
(Բաց է երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 10-ից ցերեկվա 4-ը)
Անգլերեն հեռախոսագիծ՝ 800-376-4636 (գործում է երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 10-ից ցերեկվա 4-ը)
Իսպաներեն հեռախոսագիծ՝ 888-442-2237
Տեքստային հաղորդագրության հեռախոսագիծ՝ 510-925-0335
Զանգի միջոցով (անգլերեն և իսպաներեն) տրամադրվում են անվճար և գաղտնի տեղեկություններ, ուղեգրեր, աջակցություն և ընկերական՝ ոչ մասնագիտական (peer) խորհրդատվություն վերարտադրողական և սեռական առողջության բազմաթիվ խնդիրների, ինչպես նաև հղիության և աբորտի տարբերակների մասին:

**AID Access**
**«Էյդ Աքսես» («ՕԳՆՈՒԹՅԱՆ Հասանելիություն»)**
https://aidaccess.org/
Aid Access-ը աշխատում է՝ բարելավելու այն կանանց առողջական վիճակը և մարդու իրավունքները, ովքեր չեն կարող օգտվել հղիության արհեստական ընդհատման տեղական ծառայություններից:

**American College of Obstetricians and Gynecologists (ACOG)**
**Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջ**
https://www.acog.org/womens-health/faqs/induced-abortion
Հուսալի, ապացույցների վրա հիմնված առողջապահական տեղեկատվություն, որը կենտրոնանում է կանանց առողջության վրա:

**California Abortion Access**
**Հղիության արհեստական ընդհատման հասանելիություն Կալիֆորնիայում**
https://www.cdph.ca.gov/programs/ohe/abortion/pages/home.aspx
Կալիֆորնիայի նահանգի այս կայքը տալիս է թարմ և ճշգրիտ տեղեկություններ այն մասին, թե ինչպես կարող եք Կալիֆորնիայում օգտվել հղիության արհեստական ընդհատման ծառայություններից:

**Hey Jane**
**«Հեյ Ջեյն»**
https://www.heyjane.co/
Տեքստային հաղորդագրության հեռախոսահամար՝ 405-643-7957
Վիրտուալ կլինիկա, որը ձեր տուն է մատակարարում հղիության ընդհատման դեղահաբեր:

**INeedAnA**
**«Այնիդընէյ» («Ես կարիք ունեմ»)**
https://www.ineedana.com/
“I Need an A”-ն անգլերեն և իսպաներեն առցանց ինտերակտիվ հարթակ է, որն օգնում է օգտատերերին գտնել ծառայություններ և կլինիկաներ իրենց տարածքում կամ իրենց նախընտրած փոստային դասիչով (zip code):

**Miscarriage + Abortion Hotline**
**Վիժումներին + հղիության արհեստական ընդհատմանը վերաբերող թեժ գիծ**
https://www.mahotline.org/
833-246-2632 (թեժ գծի ժամերը՝ առավոտյան 5-ից երեկոյան 10-ը՝ արևմտյան ափի ժամանակով)
Գտեք գաղտնիություն պահպանող աջակցություն և ինքնուրույն կառավարեք ձեր վիժումը կամ աբորտը՝ հղիության արհեստական ընդհատումը: Զանգահարեք կամ գրեք վիժման և աբորտի բուժօգնության տարիների փորձ ունեցող բժիշկներին:

**National Abortion Federation**
**Հղիության արհեստական ընդհատման ազգային միություն**
https://prochoice.org/patients/find-a-provider/
Առցանց ինտերակտիվ քարտեզ՝ ձեր մոտակայքում ծառայություն իրականացնող գտնելու համար (ԱՄՆ, Մեքսիկա, Կանադա): Հղիությունների արհեստական ընդհատման և այլ

ծառայությունների, ներառյալ՝ ֆինանսական օգնության մասին տեղեկությունների համար զանգահարեք 1-800- 772-9100 հեռախոսահամարով:

**Plan C**
**Ծրագիր C**

https://www.plancpills.org/

Plan C-ն տրամադրում է ընթացիկ տեղեկություններ անգլերենով և իսպաներենով՝ օգնելու ԱՄՆ-ում ապրող մարդկանց առցանց ձեռք բերել դեղահաբեր՝ տնային պայմաններում հղիության արհեստական ընդհատման համար:

**Women's Health Specialists**
**Կանանց առողջության մասնագետներ**

https://www.womenshealthspecialists.org/

800-714-8151 (բաց է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ն) Այս աղբյուրը տրամադրում է վերարտադրողական առողջությանն առնչվող աջակցություն, ուսուցում և ծառայություններ:

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ.
## ԶԳՈՒՇԱՑԵՔ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇՈՂ ԳՈՎԱԶԴՆԵՐԻՑ

Ճգնաժամային հղիության կենտրոնները (Crisis Pregnancy Centers, CPC), որոնք հայտնի են նաև որպես Հղիությանը վերաբերող ծառայությունների կենտրոններ (Pregnancy Resource Centers), մասնավոր հաստատություններ են, որոնք նման են առողջապահական կլինիկաների, սակայն անձնակազմի անդամները հաճախ բուժաշխատողներ չեն: Կալիֆորնիայում և ամբողջ երկրում դրանք ավելի տարածված են, քան աբորտ՝ հղիության արհեստական ընդհատում իրականացնող կլինիկաները: Դրանք հաճախ տեղակայված են աբորտի կլինիկաներին շատ մոտ: Երբ առցանց են, հեշտ է կարծել, որ դրանք հղիության ընդհատումներ իրականացնող կլինիկաներ են, եթե չկարդաք մանր տառերով գրվածքը:

Ճգնաժամային հղիության կենտրոնները (CPC) սովորաբար ղեկավարվում են կրոնական կազմակերպությունների կողմից և առաջարկում են հղիության թեստեր, ուլտրաձայնային հետազոտություններ և հղի ծնողների ու նորածինների համար պարագաներ՝ անվճար կամ դասընթացների հաճախելու դիմաց: Կալիֆորնիայում որոշ CPC-ներ առաջարկում են ավելի համապարփակ առողջապահական ծառայություններ: Սակայն փոխանակ հիվանդներին աբորտի մասին ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու, որպեսզի մարդիկ կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել, նրանք նպատակ են դնում ետ պահել կանանց աբորտ անելուց: CPC-ներն ԱՄՆ-ում հաճախ հաճախորդներին տալիս են կեղծ բժշկական տեղեկություններ:

Կարող է դժվար լինել տարբերելը՝ արդյոք կլինիկան բժշկական կլինկա է, թե CPC: Այդ իսկ պատճառով խնդրում ենք ստուգել CPC-ների մասին մեր փաստերի թերթիկն այստեղ:

Reproaction-ը թվարկում է Միացյալ Նահանգներում հակաաբորտային կեղծ կլինիկաները, որոնք դեմ են աբորտին, պախարակում են աբորտի համար բուժօգնությունը կամ խթանում են աբորտի այլընտրանքները: Խնդրում ենք ցանկը գտնել այստեղ:

Կալիֆորնիայում Գլխավոր դատախազ Ռոբ Բոնթան վերարտադրողական առողջության ծառայությունների կարիք ունեցող Կալիֆորնիայի բնակիչների համար հրապարակել է սպառողների նախազգուշացում, որը հայտնում է ճգնաժամային հղիության կենտրոնների (CPC) սահմանափակ և մոլորեցնելու հավանականություն ունեցող բնույթի մասին: Կալիֆորնիայի այն բնակիչները, որոնք կարծում են, որ իրենք եղել են խարդախության, մոլորեցնող, անարդար կամ անօրինական գործողության զոհ կամ թիրախ, պետք է անհապաղ բողոք ներկայացնեն այստեղ՝ oag.ca.gov/crisis-pregnancy-center-complaint:

Եթե մտածում եք հղիության արհեստական ընդհատման մասին և ցանկանում եք ստանալ բարձրորակ, բժշկական տեսանկյունից ճշգրիտ խորհրդատվություն կամ բուժօգնություն, անպայման դիմեք հեղինակություն ունեցող, արտոնագրված բժշկական կենտրոն, ինչպես օրինակ՝ այս աղբյուրում թվարկված կենտրոններից մեկը:

# ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

**Աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման ծախսերի վճարում. բուժօգնության ծախսեր** Կալիֆորնիայի նահանգում բժշկական ապահովագրությունները՝ ներառյալ ցածր եկամուտ ունեցող մարդկանց տրամադրվող Medi-Cal-ը, փակում են աբորտի ծախսերը: Յուրաքանչյուր հղի կարող է դիմել Medi-Cal-ի համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից (լրացուցիչ տեղեկությունների համար ստորև տե՛ս «*Medi-Cal-ի ապահովագրություն*» բաժինը):

### Medi-Cal-ի ապահովագրություն

Medi-Cal-ը Կալիֆորնիայում բժշկական ապահովագրություն է ցածր եկամուտներ ունեցող մարդկանց համար: Դուք կարող եք դիմել Medi-Cal-ի նպաստների համար՝ անկախ ձեր տարիքից, սեռից, ռասայից, կրոնից, գույնից, ազգային ծագումից, սեռական կողմնորոշումից, ամուսնական կարգավիճակից, հաշմանդամությունից, վետերանի կամ ներգաղթի կարգավիճակից:

**Ե'վ Սահմանափակ Medi-Cal-ը (միայն շտապ օգնության և հղիության հետ կապված ծառայություններ), և' Հղիության Medi-Cal-ը վճարում են հղիության, ծննդի, վիժման կամ աբորտի պատճառով առաջացած առողջապահական կարիքների ծախսերը, ինչպես նաև հղիությանը հաջորդող 12 ամիսների ընթացքում պահանջվող բուժօգնության ծախսերը՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:** Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

https://www.dhcs.ca.gov/Get-Medi-Cal/Pages/pregnancy.aspx

- **Եթե ապրում եք Կալիֆորնիայում և իրավասու եք եկամուտ ստանալ, դուք կարող եք աբորտի բուժօգնության համար անմիջապես ստանալ ժամանակավոր Medi-Cal՝ Presumptive Eligibility for Preganat Women (PE4PW, «Ենթադրվող իրավասություն հղի կանանց համար») ծրագրի միջոցով: Օգնության համար դիմեք այստեղ՝** http://publichealth.lacounty.gov/mch/choi/CHOIContractorListEngSp.pdf
- **Իմացեք ավելին PE4PW-ի մասին՝** https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/eligibility/Pages/PE_Info_women.aspx
- **Medi-Cal-ի ոչ-բժշկական փոխադրման նպաստ (NMT)**: NMT-ն դեպի Medi-Cal-ի կողմից վճարվող ծառայություններ և հակառակ ուղղությամբ փոխադրումն է: Անկախ ներգաղթի կարգավիճակից՝ Medi-Cal-ում գրանցված բոլոր մարդիկ՝ ներառյալ հղիները, կարող են օգտվել այս ծառայությունից մինչև հղիությունից հետո 12-ամսյա շրջանի ավարտը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
  https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/Transportation_General_FAQ.aspx

**Օգնություն ստացեք՝ անվճար կամ ցածր արժեքով ապահովագրության համար դիմելով Community Health Outreach Initiative-ին (Համայնքներում առողջության օժանդակության նախաձեռնություն)՝ http://publichealth.lacounty.gov/mch/choi/choi.htm**:

**Ծանոթություն: Medi-Cal-ի համար որպես ներգաղթյալ դիմելը՝ օրինական կամ անօրինական կարգավիճակով, Չի վնասի հետագայում ներգաղթի կարգավիճակի փոփոխման համար դիմելու ձեր կարողությանը:**

**Աբորտի համար մասնավոր բժշկական ապահովագրությամբ վճարում**

Կալիֆորնիայի օրենքը մասնավոր բժշկական ապահովագրության ծրագրերի մեծ մասից պահանջում է փակել հղիության արհեստական ընդհատման ծառայության ծախսերը՝ առանց համավճարի, նախնական վճարի (deductible) կամ ծախսերը կիսելու որևէ տարբերակի: Եթե ունեք մասնավոր ապահովագրություն, պարզեք դա ձեր ապահովագրության ծառայությունից, քանի որ եթե ապահովագրությունը հիմնված չէ Կալիֆորնիայում, աբորտի ծախսերի համար վճարումը կարող է տարբեր լինել՝ համաձայն այդ նահանգի օրենքի:

**Աբորտի ծախսերը վճարելու այլ օժանդակություններ**

Աբորտ՝ հղիության արհեստական ընդատում անելը հաճախ ունենում **է բուժօգնության ծախսերից բացի այլ ծախսեր**: Աբորտի հիմնադրամները մասնավոր կազմակերպություններ են, որոնք կարող են օգնել փակել հղիության արհեստական ընդհատման ծախսերը, ինչպես նաև հոգալ գրպանից վճարվող և «կազմակերպչական» կամ «գործնական օգնության» ծախսերը՝ ներառյալ փոխադրամիջոցի, գիշերակացի, սննդի, երեխաների խնամքի, թարգմանչական ծառայությունների, աբորտի դուլաների (օգնող մանկաբարձներ) և այլնի համար (և' Կալիֆորնիայի բնակիչների, և' այլ վայրերից նահանգ եկածների համար): Աբորտի հիմնադրամները չեն ստուգում ներգաղթի կարգավիճակը կամ քաղաքացիության ապացույցը:

**Լոս Անջելեսում/Կալիֆորնիայում գործնական օգնութան և աբորտների ուղղորդման ծառայություններ**

**ACCESS Reproductive Justice**
**«Վերարտադրողության արդարդության» ACCESS-ի շրջանակներում**

https://accessrj.org/

(Բաց է երկուշաբթիից հինգշաբթի՝ առավոտյան 10-ից ցերեկվա 4-ը)

Անգլերեն առողջապահական հեռախոսագիծ՝ 800-376-4636

Իսպաներեն առողջապահական հեռախոսագիծ ՝ 888-442-2237

Տեքստերի համար հեռախոսային գիծ՝ 510-925-0335

Ունենալով հղիության տարբերակների և աբորտի ծառայությունների հատուկ փորձ՝ տրամադրում է վերարտադրողական և սեռական առողջության բազմաթիվ խնդիրներին վերաբերող անվճար, գաղտնի տեղեկություններ, ուղեգրեր, աջակցություն և ընկերական՝ ոչ մասնագիտական (peer) խորհդատվություն:

**Maternal and Child Health Access (MCHA)**
**Մոր և մանկան առողջապահության հասանելիություն**

https://www.mchaccess.org/

MCHA-ի հեռախոսահամարն է 213.749.4261(երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 9:00-ից երեկոյան 5:00-ն): Se habla Español

Առաջարկում է բժշկական ապահովագրորության վերաբերյալ ուղեցույց և աջակցություն անհատներին ու նրանց մատակարարներին՝ ժամանակին և համապատասխան բուժում ապահովելու համար: Օգնում է Medi-Cal-ի, Covered California-ի, Medi-Cal Access ծրագրի և մասնավոր ապահովագրությունների համար իրավասությանը վերաբերող խնդիրների, ծրագրերի տարբերակների և գրանցման համար օգնության հարցերում: Կարող է տրամադրել դրամական օգնություն, ինչպես նաև այլ տիպի օժանդակություն երեխաների խնամքի, փոխադրամիջոցի, կացարանի և աբորտի հետ կապված այլ ծախսերի համար:

**Sex Workers' Abortion Navigation Services (SWANs), Sex Workers Outreach Project LA (SWOP LA)**
**Սեռական բնույթի աշխատանքով զբաղվողների՝ աբորտի հարցում կողմնորոշման ծառայությունների՝ «Սեռական բնույթի աշխատանքով զբաղվողների աջակցության» ծրագիր**

https://swoplosangeles.org/sex-workers-abortion-navigation-services/

Տեքստային հաղորդագրությունների համար՝ 657-549-4556: Էլ. հասցե՝ swoplaswans@proton.me

Sex Worker Outreach Project LA Abortion Navigation Services-ը (SWOP LA) ծրագիր է աբորտի Sex Workers Abortion Navigation Services (SWANs) -ում, որը հղիության արհեստական ընդհատման մտադրություն ունեցող մարդկանց համար աբորտը դարձնում է հասանելի՝ տրամադրելով ֆինանսական օգնություն և տրավմայի մասին տեղեկացված ընկերական՝ ոչ մասնագիտական (peer) աջակցություն:

## Համազգային աղբյուրներ

**National Abortion Hotline**
**Աբորտի հետ կապված հարցերի ազգային թեժ գիծ**
Բազմալեզու հեռախոսային թեժ գիծ՝ 800.772.9100 (երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 5-ից ցերեկվա 4-ը, շաբաթ և կիրակի՝ առավոտյան 5-ից ցերեկվա 1-ը՝ արևմտյան ափի ժամանակով)
Չրույցի (chat) թեժ գիծ՝ https://prochoice.org/patients/naf-hotline
Տեղեկություններ է տալիս ԱՄՆ-ում և Կանադայում հղիության արհեստական ընդհատման ծառայություններ մատուցողների և սահմանափակ դրամական օգնության մասին:

**National Network of Abortion Funds**
**Հղիությունների արհեստական ընդհատման հիմնադրամների ազգային ցանց**

https://abortionfunds.org/

Հղիության արհեստական ընդհատման հիմնադրամների ազգային ցանցը կապ է հաստատում օգտատերերի և այն կազմակերպությունների միջև, որոնք կարող են աջակցել ֆինանսական և կազմակերպչական հարցերում, եթե կանայք ծրագրում են հղիության ընդհատում:

**Women's Health Specialists**
**Կանանց առողջության մասնագետներ**

https://www.womenshealthspecialists.org/

800-714-8151 (բաց է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ն)
Տրամադրում է վերարտադրողական առողջության հետ կապված աջակցություն, կրթություն և ծառայություններ:

**Women's Reproductive Rights Assistance Fund (WRRAP)**
**Կանանց վերարտադրողական իրավունքների աջակցության հիմնադրամ**

https://wrrap.org/

WRRAP-ն ուղիղ համագործակցում է ավելի քան 700 բժիշկների, կլինիկաների և հիվանդանոցների հետ (ոչ թե հիվանդների)՝ ֆինանսավորելու համար կանանց հղիությունների ընդհատումները, դեղորայքային և վիրաբուժական եղանակներով հղիությունների ընդհատումներն ամբողջ ԱՄՆ-ում՝ ներառյալ Կալիֆորնիայում և Լոս Անջելեսի Շրջանում: Կապ հաստատեք նրանց հետ ձեր կլինիկայի կամ բժշկի միջոցով:

# ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉ ՀԱԲԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

**Community Clinic Association of LA County (CCALAC)**
**Լոս Անջելեսի Շրջանի համայնքային կլինիկաների միություն**
CCALAC-ը ներկայացնում է համայնքային ոչ առևտրային կլինիկաներ և առողջապահական կենտրոններ, որոնք ունեն առաջնային բժշկական խնամքի կենտրոններ ամբողջ շրջանում: Համայնքային կլինիկաները տրամադրում են առողջության առաջնային պահպանման՝ ներառյալ բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության ծառայություններ, ինչպես նաև հակաբեղմնավորիչներ ապահովագրություն չունեցող, թերի ապահովագրություն ունեցող և բավարար միջոցներ չունեցող բնակչությանը:
Ձեր մոտակայքում կլինիկա գտնելու համար այցելեք https://ccalac.org/find-a-clinic/:

**Family PACT Providers**
**Ընտանիքի պլանավորման, օգնության, խնամքի և բուժման մատակարարներ**
Family PACT-ը Կալիֆորնիայում տրամադրում է ընտանիքի պլանավորման համապարփակ ծառայություններ ցածր եկամուտ ունեցող իրավասու տղամարդկանց և կանանց:
Ձեր մոտակայքում Family PACT-ի մատակարար կարող եք գտնել այստեղ՝ https://familypact.org/provider-search/

**Federally Qualified Health Centers (FQHCs)**
**Դաշնության կողմից որակավորված առողջության կենտրոններ**
Դաշնության կողմից որակավորված առողջության կենտրոնները համայնքային առողջապահական ծառայությունների մատակարարներ են, որոնք առողջության առաջնային պահպանման ծառայություններ են մատուցում անբավարար ծառայություններ ունեցող տարածքներում: FQHC-ները կտրամադրեն բուժօգնություն բժշկական ապահովագրություն ունենալու կամ չունենալու դեպքում:
Ձեր մոտակայքում կլինիկա կարող եք գտնել այստեղ՝ https://findahealthcenter.hrsa.gov/:

**Los Angeles County Department of Health Services, Women's Health Services**
**Լոս Անջելեսի Շրջանի Առողջապահական Ծառայությունների Վարչություն, Կանանց առողջության ծառայություններ**
Այս ծրագիրը տրամադրում է բժշկական տեղեկատվության, խորհրդատվության և ընտանիքի պլանավորման ծառայություններ ցածր եկամուտ ունեցող չափահասներին և դեռահասներին՝ չնախատեսված հղիության հավանականությունը նվազեցնելու և վերարտադրողական առողջությունը պահպանելու համար:
Ձեր մոտակայքում բուժօգնություն կարող եք փնտրել այստեղ՝
https://dhs.lacounty.gov/womens-health/our-services/womens- health/

**Title X Family Planning Clinic Locator**
**Title X-ի՝ Ընտանիքի պլանավորման կլինիկայի տեղորոշիչ**
Title X-ը դաշնային ֆինանսավորում է, որի միջոցով տրամադրվում է ընտանիքի պլանավորման մեթոդների և հարակից կանխարգելիչ առողջապահական ծառայությունների լայն շրջանակ: Գտեք ընտանիքի պլանավորման համապարփակ կլինիկաներ, որոնք պատանիներին /երիտասարդներին և ցածր եկամուտ ունեցող մարդկանց առաջարկում են հակաբեղմնավորիչներ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI) հետ կապված ծառայություններ, հղիության թեստավորում ու տարբերակների վերաբերյալ խորհրդատվություն և քաղցկեղի հետազոտություններ:
Ձեր մոտակայքում կլինիկա կարող եք գտնել այստեղ՝ https://opa-fpclinicdb.hhs.gov/:

# ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴՈՒԼԱՆԵՐԻ (ՕԳՆԱԿԱՆՆԵՐ) ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եթե դուք պատրաստվում եք ընդհատել հղիությունը կամ վերջերս եք այն ընդհատել և ցանկանում եք լրացուցիչ աջակցություն այդ գործընթացում, դիտարկեք այն խնամքը, որը կարող են ապահովել հղիության ընդհատման դուլաները՝ օգնականները: Հղիության արհեստական ընդհատման դուլաները և հատուկ պատրաստվածություն ունեցող այլ անձինք կարող են ցույց տալ հուզական և ֆիզիկական աջակցություն՝ հիվանդանոցում կամ տանը հղիության արհեստական ընդհատումից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: Հղիության արհեստական ընդհատման դուլաները կարող են ձեզ աջակցել մի քանի եղանակներով՝ ձեր առաջիկա հղիության ընդհատման մասին ձեզ գիտելիք տալով, ժամադրություն(ներ)ի ժամանակ ձեզ ուղեկցելով, կլինիկայում գտնվելու ընթացքում ձեր ձեռքը բռնելով, ցավի մեղմացման համար ձեզ խորհուրդներ տալով, ձեր ուշադրությունը շեղելով կամ այդ գործողության ընթացքում առաջացող զգացմունքների մասին խոսելով: Դուք կարող եք խոսել աբորտի դուլայի հետ դեմ առ դեմ, հեռախոսով կամ թեքստային հաղորդագրության միջոցով: Ի վերջո, բարձր պատրաստվածություն ունեցող, կարեկից այս անձնավորությունը պատրաստ է ձեզ աջակցել և հարգել վերարտադրողության հարցում ձեր ինքնուրույնությունը՝ ցույց տալով անհատական մոտեցում, որը ծառայում է ձեր յուրահատուկ կարիքներին:

**Birthworkers of Color**
**«Ծննդաբերության ոչ սպիտակամորթ աշխատողներ»**
https://www.birthworkersofcolor.com/
Մարգինալացված համայնքներին մատուցում է դուլաների բոլոր ծառայությունները և տրամադրում է աջակցություն: Հղիության և հետհղիության ընթացքում կապ է հաստատում անհատների, ընտանիքների ու համայնքների և օժանդակող (օրինակ՝ ուսուցանող, հուզական և ֆիզիկական) ծառայությունների միջև:

**LA Abortion Support Collective**
**Լոս Անջելեսում հղիությունների ընդհատման աջակցության խումբ**
https://www.laabortionsupport.org/
Տրամադրում է տեղեկատվություն Լոս Անջելեսի Շրջանում դուլայի անձամբ և առցանց աջակցության անվճար տարբերակների մասին:

**Medi-Cal Doula Directory**
**Medi-Cal-ի դուլաների տեղեկատու**
https://www.dhcs.ca.gov/provgovpart/Pages/Doula-Services-Members.aspx
Տեղեկություններ է տրամադրում ամբողջ Կալիֆորնիայում դուլաների մասին, ներառյալ՝ նրանց մասնագիտացման, լեզվի և կապի տվյալների մասին:
Այն նաև ներառում է ամբողջ Կալիֆորնիայում գործող Medi-Cal-ում գրանցված դուլայ մատակարարների տեղեկատու, որը ներառում է նրանց մասնագիտությունները, լեզուները և կապի տվյալները:

# ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շատ մարդկանց անհրաժեշտ է աջակցություն՝ որոշելու, թե ինչ անել, եթե չեն ցանկանում, բայց հղիանում են, կամ վստահ չեն, որ ցանկանում են հղիությունը մինչև վերջ շարունակել: Թեև տասնամյակների հետազոտություններն ապացուցել են, որ հղիության արհեստական ընդհատումը չի ունենում բացասական հետևանքներ ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա, բնական է, որ որոշ մարդիկ հղիությունն ընդհատելուց առաջ կամ հետո տխուր կամ զգացմունքային են լինում: Այս

աղբյուրները նախատեսված են հատուկ նրանց համար, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը, ընդհատել են հղիությունը կամ աջակցում են հղիությունն ընդհատած անձի:

**All-Options Talk-line**
**Բոլոր տարբերակների համար զրույցի ծառայություն**

https://www.all-options.org/find-support/talkline/

888-493-0092 (երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 7-ից ցերեկվա 1-ը, շաբաթ և կիրակի՝ առավոտյան 7-ից ցերեկվա 3-ը՝ արևմտյան ափի ժամանակով):

Բժշկական տեսանկյունից ճշգրիտ, անաչառ տարբերակների մասին խորհրդատվություն:

**Connect & Breathe**
**«Քնեքթ ընդ Բրիիթ» («Կապ հաստատեք և շնչեք»)**

https://connectandbreathe.org/about.html

1-866-1764 (երկուշբաթի՝ երեկոյան 4-ից 7-ը, երեքշաբթի/հինգշաբթի՝ ցերեկվա 3-ից երեկոյան 6-ը, շաբաթ՝ առավոտյան 9-ից ցերեկվա 12-ը՝ արևմտյան ափի ժամանակով)

Connect & Breathe-ը տրամադրում է ապահով միջավայր՝ քննարկելու հղիության արհեստական ընդհատման հետ կապված փորձառությունը՝ առաջարկելով զրույցի գիծ ինքնախնամքին վերաբերող անաչառ աջակցության և քաջալերման համար:

**Exhale Pro-Voice**
**«Էքզհեիլ Պրո-Վոիս»**

https://exhaleprovoice.org/

Տեքստային հաղորդագրություն ուղարկեք 617-749-2948 համարին (երկուշաբթիից ուրբաթ՝ ցերեկվա 3-ից երեկոյան 9-ը, շաբաթ՝ ցերեկվա 1-ից երեկոյան 9-ը, կիրակի՝ ցերեկվա 3-ից երեկոյան 7-ը՝ արևմտյան ափի ժամանակով)

Exhale Pro-Voice-ը առանց քննադատելու առաջարկում է հղիության արհեստական ընդհատումից հետո աջակցություն հղիության ընդհատում կատարած անձանց և նրանց, ովքեր ցանկանում են աջակցել հղիությունը ընդհատած զուգընկերոջը, երեխային կամ ընկերոջը: Օժանդակության համար տեքստային հաղորդագրություն ուղարկելուց հետո կարող է մինչև 24 ժամ տևել, մինչև կգա առաջին արձագանքը:

**Faith Aloud**
**«Ֆեյթ Ալաուդ» (Հավատքի վրա հիմնված, չքննադատող աջակցություն)**

https://www.faithaloud.org/

888-717-5010

(Երկուշաբթի/չորեքշաբթի/ուրբաթ՝ առավոտյան 8-ից ցերեկվա 3-ը, շաբաթ և կիրակի՝ առավոտյան 9-ից ցերեկվա 12-ը՝ արևմտյան ափի ստանդարտ ժամանակով)

Զանգահարեք՝ ստանալու աբորտին և հղիության տարբերակներին առնչվող կրոնական և հոգևոր կարեկցական աջակցություն: Հոգևորականներն ու կրոնական խորհրդականները կլսեն և աջակցություն կառաջարկեն առանց քննադատելու:

**Վիժումներին + հղիությունների ընդհատմանը վերաբերող թեժ գիծ**

https://www.mahotline.org/

833-246-2632 (առավոտյան 9-ից երեկոյան 9-ը՝ արևմտյան ափի ժամանակով)

Գտեք գաղտնիություն պահպանող աջակցություն և ինքնուրույն կառավարեք ձեր վիժումը կամ աբորտը՝ չբացահայտելով ձեր անձը: Զանգահարեք կամ գրեք վիժման և աբորտի բուժօգնության տարիների փորձ ունեցող բժիշկներին:

**Reprocare Healthline**
**«Ռեպրոքեյր» առողջության կապի գիծ**
https://abortionhotline.org/
833-226-7821 (զանգահարեք շաբաթը 7 օր՝ առավոտյան 9-ից երեկոյան 9-ը՝ արևմտյան ափի ժամանակով)
Տրամադրում է անանուն ընկերական՝ ոչ մասնագիտական (peer) հուզական աջակցություն, բժշկական տեղեկություններ և ուղղորդումներ այն մարդկանց, ովքեր տնային պայմաններում կատարում են հղիության դեղորայքային ընդհատում:

## ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ՀՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

**ACLU Southern California**
**Հարավային Կալիֆորնիայի՝ Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միություն**
https://www.aclusocal.org/en/know-your-rights/abortion-care-california
Հարավային Կալիֆորնիայի ACLU-ն տրամադրում է տեղեկատվություն Կալիֆորնիայում հղիության ընդհատման հետ կապված իրավունքների մասին: Այս էջը պարբերաբար թարմացվում է՝ օրենքների փոփոխությանը զուգահեռ:

**Advocates for Youth - Free the Pill**
**«Պատանիների / երիտասարդների պաշտպաններ». անվճար հաբեր**
https://www.advocatesforyouth.org/campaigns/free-the-pill/
Advocates for Youth կազմակերպությունն աշխատում է հազարավոր պատանիների /երիտասարդների կողքին այստեղ՝ ԱՄՆ-ում և ամբողջ աշխարհում՝ պայքարելով սեռական առողջության, իրավունքների և արդարության համար:

**California Consumer Alert: Right to Access Free or Low-Cost Birth Control**
**Կալիֆորնիայի սպառողների նախազգուշացում. անվճար կամ ցածր արժեքով հակաբեղմնավորիչներ ձեռք բերելու իրավունք**
Սպառողների համար նախազգուշացման պատճենը հասանելի է այստեղ: Եթե դուք Կալիֆորնիայի բնակիչ եք, ապա ունեք հակաբեղմնավորիչների անվճար կամ մատչելի տարբերակներ՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

**Teen Source**
**Աղբյուր դեռահասների համար**
https://www.teensource.org/know-your-rights
Teen Source-ը դեռահասների համար սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ տեղեկատվության և ծառայությունների առցանց հարթակ է:
Ներկայացնում է ճշգրիտ և վստահելի տեղեկություններ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (STDs), հակաբեղմնավորիչ միջոցների, առողջ հարաբերությունների և Կալիֆորնիայում կարևոր ծառայություններից (օրինակ՝ սեռական առողջությանն առնչվող ծառայություններ) օգտվելու դեռահասների իրավունքների մասին: